

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Կորեայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ «Կողմեր»,

ցանկանալով զարգացնել և ամրապնդել երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը մշակույթի, սպորտի և կրթության բնագավառներում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կխթանեն և կխրախուսեն երկու երկրների միջև մշակույթի, սպորտի և կրթության բնագավառներում համագործակցության զարգացումը՝ հիմնված հավասարության և փոխըմբռման վրա և երկու երկրների ազգային օրենսդրությանն ու կանոնակարգերին համապատասխան:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը մշակույթի տարբեր ոլորտներում՝ հետևյալ ուղղություններով.

ա/ թատերական ներկայացումների, ստեղծագործական և մշակութային խմբերի ու մենակատարների փոխանակումներ.

բ/ համագործակցություն կինոարվեստի բնագավառում՝ ֆիլմերի և երկու երկրներում կազմակերպվող կինոփառատոնների փոխանակումների միջոցով.

գ/ համագործակցություն և տեղեկատվության փոխանակում թանգարանների, գրադարանների և արխիվների միջև.

դ/ մշակութային ժառանգության պահպանության ոլորտի մասնագետների և տեղեկատվության փոխանակում.

ե/ աջակցություն մյուս երկրում անցկացվող մշակութային հարցերով միջազգային գիտաժողովներին, մրցույթներին և հանդիպումներին իրենց ներկայացուցիչների մասնակցությանը.

զ/ գեղարվեստական կրթության ոլորտում փորձի փոխանակումներ և աջակցություն արվեստագետների հանդիպումներին.

է/ ցանկացած այլ փոխգործակցության միջոցառումներ՝ հաստատված Կողմերի կողմից:

Հոդված 3

1. Կողմերը պետք է խրախուսեն իրենց երկրների համալսարանների և այլ հետազոտական ու կրթական հաստատությունների միջև ուղղակի համագործակցությունը:
2. Յուրաքանչյուր կողմ պետք է խրախուսի իր երկրի համալսարաններին և հետազոտական ու կրթական հաստատություններին կազմակերպել դասընթացներ և դասախոսություններ գրականության, պատմության և երկրի մշակույթին վերաբերող այլ ոլորտների մասին:
3. Կողմերը պետք է խրախուսեն ուսանողների փոխանակումը և նպաստեն մյուս երկրի լիազորված կրթական հաստատությունների կողմից իրենց օրենքների և կանոնակարգերի համաձայն տրված վկայականների, դիպլոմների և ակադեմիական վկայականների փոխադարձ ճանաչման դյուրացմանը:

Հոդված 4

Կողմերը կխրախուսեն սպորտի բնագավառում համագործակցության հարաբերությունները և կնպաստեն միմյանց զարգացնել և խրախուսել սպորտային կազմակերպություններին և ընկերություններին, ֆիզիկական կրթության բարձրագույն ուսումնական հաստատություններին, քոլեջներին, ոլորտը համակարգող մասնագետներին, ինչպես նաև երկու երկրների մարզիչ-մանկավարժների փոփոխականներին:

Հոդված 5

Կողմերը կաջակցեն երիտասարդության ոլորտում համագործակցության հարաբերություններին և կխրախուսեն միմյանց երիտասարդական քաղաքականության ոլորտում համագործակցության դյուրացմանը և խթանմանը, երիտասարդների, մասնագետների և համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների փոխանակմանը, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման հետ կապված համատեղ սեմինարների, հանդիպումների և այլ գործունեությունների կազմակերպմանը:

Հոդված 6

Կողմերը կստեղծեն Համատեղ Կոմիտե՝ բաղկացած յուրաքանչյուր կողմից հավասար թվով ներկայացուցիչներից, որոնք պարբերաբար կհանդիպեն հաջորդաբար Երևանում և Սեուլում:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կատարման ընթացքում առաջացած ցանկացած տարաձայնությունները կլուծվեն Կողմերի միջև բանակցությունների կամ խորհրդատվությունների միջոցով՝ դիվանագիտական ճանապարհով:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Յուրաքանչյուր այդպիսի փոփոխություն ու լրացում կձևակերպվի առանձին արձանագրություններով կամ

համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն Կողմերի համաձայնությամբ կամ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված ընթացակարգի համաձայն:

Հոդված 9

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ ներքին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին միմյանց ծանուցելու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կգործի մինչև Կողմերից մեկը գրավոր, դիվանագիտական ուղիներով ծանուցի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Այդպիսի դադարեցումն ուժի մեջ կմտնի ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց Կառավարությունների կողմից, ստորագրել են սույն Համաձայնագիրը:

Կատարված է Սեուլում, 2014թ. հուլիսի 4-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, կորեերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով տեքստին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

**ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**